Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Աղավնաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկա (9 դասաժամ), մաթեմատիկա (10 դասաժամ) առարկայի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. դիմում/Ձև 1/, մեկ լուսանկար 3 x4 չափի
2.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/
3.անձը հաստատող փաստաթուղթ
4.Ինքնակենսագրություն/Ձև 5/
5.<<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդհոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/
6.այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ
7.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ
8.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ/առկայության դեպքում/
9.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները հետ վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 19-ից նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 10:00-15:00, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 7-ին՝ ժամը 15:00-ին,** Աղավնաձորի Զ.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, 2-րդ փողոց, 2-րդ շենք:
Տեղեկությունների համար զանգահարել 094-50-45-11 հեռախոսահամարով: